ռուզ ազգին ապստամբութեամբ. զոր նոքա ի մէջ բերդին հինգ վեց տեղ հրով այրեցին, և ապա ամենայն քաղաքն և բերդն չիւարեցան, և ինքեանք ետուն զբերդն թշնամեաց, և գերեցան ամենեքեան ի ձեռն Մոսկովցոցն։ Զոր Տէր Յիսուս երկնաւոր թագաւորն զվերջն նոցա ի բարին դարձուցէ. և զՅիկմունդ թագաւորն զօրացուցէ ի վերայ թշնամեաց իւրոց։

1563. Թվ. ՌԺԲ. և յուլիս ամսոյ ԺԳ. Ըռուզ գնեալ Վիշնովեցքին՝ գնաց ի Օլախաց երկիրն, զի լինէր պարոն ի վերայ երկրին. և ընդ իւր ունէր 3000 հոգի հեծելազօր։ Եւ անհաւատ ազգն Օլախաց թոյլ ետուն որ մտաւ և եկաւ ի Սեչով հասաւ. և եկաց անդ երկու շաբաթ. և զՏեսրոթն կամեցաւ ի բերդէն հանել, զի փոխանակ նորա ինքն նստցի պարոն. Եւ այս Տեսրոթն չի հնազանդեցաւ նմա. այլ ազաչէր զնա ի խաղաղութիւն, զի թոյլ տացէ նմա՝ զի երթիցէ իւրովի ուր և կամենայ. իսկ նա բնաւ չընդունեց զաղաչանքն նորա. այլ ուժգնութեամբ կամէր զինքն հանել և սպանանել։ Յետոյ բազմացան անօրինաց ազգն այն Օլախն, և դիմեցին ի վերայ գնազին, և յաղթահարեալ կոտորեցին զամենեսեան առ հասարակ. և զինքն զՎեշնովեցքին կենդանի ձերբակալ առին, և ընդ նմա զԲիսոցքին և զայլս բազումս. զոմանց զքիթն և զականջս հատին, և զոմանս ի հետ գնազին և Բիսոցքիին ի խոնդիքարն զրկեցին կապանաք։ Եւ այսպէս կորեաւ ունայնութեամբ, և ընդ իւր կորոյս զամենեսեան առ հասարակ։

Եւ յորժամ զՏեսրոթն կամեցան սպանանել անհաւատ ազգն Օլախաց, և նա զերծաւ ի նոցանէ, և փախեաւ ի բերդն Սեչովին, և փակեցաւ յամրոցին։ Եւ այս անօրէնքն ընտրեցին ի մէջ իւրեանց զոմն Տոմշա անուն, զոր էր փանաքի ծառայ այս Տեսրոթին. և զնա փոխանակ նորա հաստատեցին պարոն ի վերայ երկրին, և մինչեւ երեք ամիս ոչինչ կարացին առնել չար՝ Տեսրոթին, այլ մանաւանդ զբազումս ի յանհաւատիցն կոտորեց ի բերդէն այդ Տեսրոթն. զի ունէր ընդ իւր ի մէջ բերդին 500 հոգի՝ զոր ընդ նմա փախեան, միաբանեցան ի մէջ բերդին։ Եւ այս ամբարիշտն Տոմշա պիղծ և անիրաւ ոմն եղեւ, զոր և զբազումս կորոյս չարաչար մահուամբ զանմեղ զոմանս. ընդ որս էր ոմն կրօնաւոր Յովանէս, զոր մականուն Ծուռգտակ անուանէին. և զնա անպարտ և անմեղ գոլով՝ ետ կախել զփայտէ. և զՀայոց Վոյթն լաւ և անմեղ ոմն Խաչերես անուն՝ և զնա կախել ետ ընդ նմա. և զերեք կինն Հայոց փոքր զաւակաք իւրեանց՝ ետ կախել անողորմ և անիրաւ դատաստանաւ։ Զոր Տէր հատուցէ չարին ըստ չարութեան իւրում և խընդրեսցէ վրէժ ի նմանէ՝ այդ անմեղ և անպարտ արեանց նոցա վասն։

Յետոյ ոմն իշխան Լաստի անուն, զոր առաջագոյն գրեալ է պատմութիւն նորա ի մէջ գրքիս, թէ որպիսի ինչ առաւ նա այս Տեսրոթին, և սա իբրեւ լուաւ զբանն Տեսրոթին, ահա փութանակի եհաս զօրովքն ի Կամենիցս. բայց կարի շատ ոչ ունէր զօրք. և համբերեալ մնաց երկու ամիս, մինչ որ բազմանայցէ զօրքն, յետոյ եմուտ այդ խուժդուժն յերկիրն սակաւ զօրաք։